ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1385-Ա

ԿԱՐԻՆԵ ՔԱՐԱՄՅԱՆԻՆ ԵՎ ՔՆՔՈՒՇ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ՀՈՒՆԳԱՐԻԱ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի՝

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության սնանկության գործերի բաժնի գլխավոր մասնագետ Կարինե Քարամյանին և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության հետազոտությունների և զարգացման բաժնի ավագ հարկային տեսուչ Քնքուշ Մովսիսյանին 2022 թվականի նոյեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 1-ը գործուղել Հունգարիա (Բուդապեշտ)՝ «Սնանկության անդրսահմանային ընթացակարգերի գործնական կիրառում» համաժողովին մասնակցելու նպատակով:

2. Կարինե Քարամյանի և Քնքուշ Մովսիսյանի՝ Հունգարիա գործուղման ճանապարհածախսը և 2022 թվականի նոյեմբերի 28-ի օրապահիկի ծախսը կատարել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոց-ների հաշվին:

3. Ընդունել ի գիտություն, որ Կարինե Քարամյանի և Քնքուշ Մովսիսյանի՝ Հունգարիա գործուղման գիշերավարձի և 2022 թվականի նոյեմբերի 29-ից մինչև դեկտեմբերի 1-ի օրապահիկի ծախսերը կատարվելու են հրավիրող կողմի միջոց-ների հաշվին:

4. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ ապահովել գործուղումից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում Հունգարիա գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն ներկայացնելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

24.11.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ